

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ
և
դինամիկ շարքեր**


Վիճակագրական ժողովածու

Ժողովածուի կազմման համար հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները, ՀՀ բնապահպանության և մի շարք այլ նախարարությունների ու գերատեսչությունների վարչական ռեգիստրների ամփոփ տվյալները: Վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների շրջանակը որոշվել է համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ՝ հիմք ընդունելով ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և գերատեսչական մարմինների վարչական ռեգիստրների տվյալները:

Վերլուծականում ներառված բնապահպանական և բնօգտագործման ուղղությունները բնութագրող առանձին բաժիններն ավարտվում են համապատասխան մեթոդաբանական պարզաբանումներով և դրանց գործունեությունը բնութագրող հիմնական վիճակագրական դինամիկ շարքերով:

Ժողովածուն պատրաստել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի շրջակա միջավայրի և բնական պաշարների վիճակագրության խումբը:

ՀՀ ԱՎԾ-ն երախտագիտություն է հայտնում ՀՀ բնապահպանության նախարարությանը և այլ վարչական ռեգիստրներ վարող մարմիններին սույն ժողովածուի կազմմանը ցուցաբերած օժանդակության համար:



Պայմանական նշաններ

Երևույթը բացակայում է	—
վիճակագրական տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0

Ներածություն

Վերլուծական սույն ժողովածուն նպատակաուղղված է սպառողների լայն շրջանակին ներկայացնելու հանրապետության շրջակա միջավայրը, բնական պաշարներն ու դրանց օգտագործումը բնութագրող ամփոփ տվյալների դիմամիկան և 2003թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները՝ հիդրոօդերևութաբանական պայմաններ, անտառային տնտեսություն, բնության հատուկ պահպանվող տարածքներ, օգտակար հանածոներ, մթնոլորտային օդի պահպանություն, ջրային պաշարների պահպանություն և արդյունավետ օգտագործում, թափոններ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ, բնապահպանության ընթացիկ ծախսումներ, բնապահպանության հիմնական արտադրական միջոցներ, շրջակա բնական միջավայրի աղտոտվածության հսկողության մոնիթորինգ, բնապահպանության իրավախախտումներ, արտակարգ իրավիճակներ: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դիմամիկ շարքերով:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական հիմք հանդիսանալ բնապահպանության քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

77 Ազգային վիճակագրական ծառայություն